

լէպի ուրհայեցի, սորա ոտքն ուռուցեալ, եւ  
 ասնն բժիշկ եթէ կտրեսցես ապրիս, եւ եթէ  
 ոչ՝ մեռանիս: Եւ իբրեւ կտրեցին դարձեալ զօ-  
 րացաւ ցաւն եւ մեռանէր յէտրէնէ քաղաք:  
 Ումն սարի Աբրահամու հայհոյչի՝ ի մտանել  
 ի դուռս տան իւրոյ՝ յաչն բեւեռ դրանն իւրոյ  
 յանկարծ հարաւ եւ անկեալ մեռաւ: Ոմն Շահ-  
 նազար ժպիրհ ագուլեցի, արամբ միով ծովա-  
 հեղձ եղեւ եւ ոչ գտաւ դի նորա բնաւ: Խօս-  
 րօվի ագուլեցւոյ եղբայրն Սարիսօշ անուն  
 մտացի, կոծելով եւ հայհոյելով զեղբայրն  
 մեռաւ: Աւագ անուն ոմն կաղզուանցի, իբրու  
 Մէլիք այնմ գաւառին զինքն պարծէր, ընդ որս  
 լինէր վրէժխնդիր եւ թղթատար նոցա, եւ վասն  
 հոգաբարձութեան գնաց ի կիրիտ առ վէզերն՝  
 մեռաւ անդ խղճութեամբ: Պօտուռ սիմն իս-  
 տամպօլցի տայ դրամն առ ի յօգնութիւն նոցա,  
 եւ յոչ կարել առնուլ զդրամն, փոխանակ առ-  
 նէր զնուիրակութեան նուէրսն որ յանուն սուրբ  
 Երուսաղեմայ անկանէր նա կրէր: Որ եւ յերոր-  
 դում եւ ի չորրորդում չեւ եւս հասեալ ի  
 բնակս քրիստոնէից, ի պանտուրմա անկեալ  
 յերիվարէն հարեալ ցից փայտի ի փոր նորա  
 հայհոյութեամբ մեռաւ: Պարագլուխն սոցա  
 Էմիրզէ ջահեցի յետ բազում վրիժառութեան  
 գնաց ի կիրիտ առ վէզերն՝ հանել այլ իմն հրա-  
 ման եւ բերել առ յակոբ կաթողիկոսն ի դար-  
 ձին հազիւ ի ցամաք ի զըզըլ ճիսար մեռաւ  
 հարեալ ոմն փայղան թիով ի փոր նորա: Զդէտն  
 սոցուն ասեմ զԱրագիս պատրիկն վասն պար-